

Նպատակ 14: Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը

Աշխարհի օվկիանոսները՝ դրանց ջերմաստիճանը, քիմիական բաղադրությունը, հոսանքները և կյանքը, շարժիչ ուժ են համաշխարհային համակարգերի համար, որոնք երկիրը դարձնում են մարդկության համար բնակելի:

Անձրևաջրերը, խմելու ջուրը, եղանակը, կլիման, ջրափնյա գծերը, մեր սննդի մեծ մասը և նույնիսկ մթնոլորտային թթվածինը, որը մենք շնչում ենք, վերջին հաշվով ապահովում և կարգավորում է ջուրը: Պատմության ընթացքում օվկիանոսները և ծովերը եղել են կարևոր ջրուղիներ առևտրի և հաղորդակցության համար:

Այս համաշխարհային կենսական պաշարների խնամքով տնօրինումը կայուն ապագայի առանցքային բաղադրիչներից է:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Պաշտպանված ծովային տարածքները խթանում են աղբատության կրճատումը՝ մեծացնելով մարդկանց եկամուտը և բարելավելով առողջությունը:

Ո՞րն Է Նպատակը

Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը:

Ինչո՞ւ

Օվկիանոսներն ապահովում են կարևոր բնական պաշարներ, այդ թվում՝ սնունդ, դեղեր, կենսավառելիք և այլ ապրանքներ: Օվկիանոսներն օգնում են թափոնների և աղտոտումների վերացմանն ու քայքայմանը, իսկ դրանց ափամերձ էկոհամակարգերը գործում են որպես պատնեշներ՝ նվազեցնելու փոթորիկներից եկող վտանգը: Առողջ օվկիանոսների պահպանումը նպաստում է կլիմայի փոփոխության մեղմացմանն ու հարմարվողականությանն ուղղված ջանքերին: Իսկ դու եղե՞լ ես ծովափում: Այն նաև հրաշալի վայր է զբոսաշրջության և հանգստի համար: Դեռ ավելին, պաշտպանված ծովային տարածքները նպաստում են աղբատության նվազեցմանը՝ ընդլայնելով ձկնորսությունն ու եկամուտը և բարելավելով առողջությունը: Դրանք նաև աջակցում են գենդերային հավասարությանը, քանի որ կանայք փոքր ձկնորսարաններում կատարում են աշխատանքի մեծ մասը:

Կարծես թե արժե պաշտպանել: Այսպիսով՝ ո՞րն է խնդիրը:

Աշխարհի օվկիանոսներում կոշտ թափոնների մակարդակի ավելացումը բնապահպանական և տնտեսական հսկայական ազդեցություն ունի: Դրանք ազդում են կենսաբազմազանության վրա՝ կենդանի օրգանիզմները դրանք կլանում են, ինչը կարող է սպանել նրանց կամ անհնար դարձնել նրանց բազմացումը:

Կորալային խութերի 20%-ը ոչնչացել է, և չկան վերականգնման հեռանկարներ: Մնացած խութերի մոտ 24%-ը մարդկային ազդեցության հետևանքով ենթակա է ոչնչացման անմիջական վտանգի, իսկ ևս 26%-ը ոչնչացման երկարաժամկետ սպառնալիքի տակ է:

Ավելին, ծովային միջավայրի ոչ ճիշտ կառավարումը հանգեցնում է ձկնորսության չարաշահման: Ձկնորսությունից ստացվող նվազագույն տնտեսական եկամուտներն, ըստ հաշվարկների, կազմում են տարեկան մոտ 50 մլրդ ԱՄՆ դոլար: Ըստ ՄԱԿ-ի Շրջական միջավայրի ծրագրի հաշվարկների՝ օվկիանոսների վատ կառավարման ընդհանուր տնտեսական ազդեցությունը տարեկան կազմում է նվազագույնը 200 մլրդ ԱՄՆ դոլար: Մեղմացնող միջոցների բացակայության դեպքում կլիմայի փոփոխությունը մինչ 2050 թ. օվկիանոսին հասցվող վնասի արժեքը կավելացնի տարեկան հավելյալ 322 մլրդ ԱՄՆ դոլարով:

Ի՞նչ կարծենա խնդրի լուծումը

Գործողությունների իրականացման ծախսերը փոխհատուցվում են երկարաժամկետ ձեռքբերումներով: Տնտեսական առումով, Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի համաձայն՝ համաշխարհային օվկիանոսի պահպանությանն ուղղված լայնածավալ գործողությունները պահանջում են 32 մլրդ ԱՄՆ դոլարի մեկանգամյա հանրային ծախս և տարեկան 21 մլրդ ԱՄՆ դոլարի ընթացիկ ծախսեր:

Ի՞նչ կարող ենք անել

Բաց օվկիանոսի և խոր ծովային տարածքների համար կայունություն կարող է ձեռք բերվել միայն ընդլայնված միջազգային համագործակցության միջոցով՝ պաշտպանելու խոցելի բնական միջավայրերը: Անհրաժեշտ է հետամուտ լինել կառավարության կողմից պահպանվող տարածքների բազմակողմանի, արդյունավետ և անաչառ կառավարման համակարգերի ստեղծմանը՝ պահպանելու կենսաբազմազանությունը և ապահովելու կայուն ապագա ձկնարդյունաբերության համար:

Տեղական մակարդակում մենք պետք է կատարենք օվկիանոսի նկատմամբ բարենպաստ ընտրություններ՝ օվկիանոսային ծագման ապրանքներ գնելիս կամ ուտելիս և սպառելով միայն այն, ինչ անհրաժեշտ է: Լավ սկիզբ կլինի հավաստագրված ապրանքներ ընտրելը:

Առօրյա կյանքում փոքր փոփոխություններ կատարելը, ինչպես՝ հանրային տրանսպորտից օգտվելը և էլեկտրական սարքերը չօգտագործելու դեպքում հոսանքից

անշատելը, ինչպիսիք է Էներգիա: Այս գործողությունները նվազեցնում են մեր ածխածնային հետքը՝ գործոն, որը նպաստում է ծովի մակարդակի բարձրացմանը:

Անհրաժեշտ է որքան հնարավոր է վերացնել պլաստիկ իրերի օգտագործումը և կազմակերպել ափամերձ տարածքների մաքրում:

Ամենակարևորը՝ մենք կարող ենք տարածել ուղերձն այն մասին, թե որքան կարևոր է ջրային կյանքը, և ինչու է անհրաժեշտ պահպանել այն:

Կայուն զարգացման նպատակների և 14-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>